

«Սույն փաստաթուղթը հանդիսանում է HUD-ի կողմից տրված իրավական փաստաթղթի թարգմանություն: HUD-ը տալիս է սույն թարգմանությունը ձեզ պարզապես հարմարության համար, որպեսզի դուք հասկանաք ձեր իրավունքները և պարտականությունները: Սույն փաստաթղթի անգլերեն տարբերակը հանդիսանում է պաշտոնական, իրավական և հսկող փաստաթուղթ: Սույն թարգմանված փաստաթուղթը պաշտոնական փաստաթուղթ չի հանդիսանում»:

**Ցուցանմուշ 7-7. \*\*Նմուշ\*\* Սկզբնական ծանուցման միջանկյալ ճշգրտում**

(Վարձակալի անունը, ազգանունը / Tenant's Name)  
(Հասցեն / Address)

(Ամսաթիվ / Date)

Հարգելի \_\_\_\_\_.

(Կառավարող գործակալը, ռեզիդենտ մենեջերը և այլն / Management Agent, Resident Manager, etc.) կարծում է, որ դուք չեք ներկայացրել տեղեկատվություն ձեր (եկամուտի կամ ընտանիքի կազմի / income or family composition) փոփոխության մասին: Եթե դա ճիշտ է, ապա այդ փոփոխության մասին տեղեկատվություն չներկայացնելը հանդիսանում է ձեր վարձակալության պայմանագրի պարբերությունը (16-ի կամ 24-ի / 16 or 24) խախտում (եթե կիրառելի է / if applicable):

Եթե դուք չեք ներկայացրել տեղեկատվություն փոփոխության մասին, ապա ձեր վարձակալության պայմանագրը մեզ իրավունք է տալիս դադարեցնելու ձեր վարձավճարի օգնությունը և տալու այն մեկ այլ ընտանիքի: Այնուամենայնիվ, եթե դուք հանդիպեք (Ռեզիդենտ մենեջերի, վարձակալության ծառայողի և այլն / Resident Manager, Occupancy Clerk, etc.) հետ մինչև (սույն ծանուցման ամսաթվից 10 օրացուցային օր հետո / 10 calendar days from the date of this notice) և ներկայացնեք տեղեկատվություն ձեր (եկամուտի, ընտանիքի կազմի / income, family composition) փոփոխության մասին (առկայության դեպքում), ապա մենք չենք դադարեցնելու ձեր օգնությունը, եթե ձեր եկամուտը ցույց չտա, որ դուք այլևս իրավասու չեք օգնության համար: Խնդրում ենք չստիպել մեզ դիմելու նման կտրուկ քայլի: Ամմիջապես զանգահարե՛ք (Ռեզիդենտ մենեջերին, վարձակալության ծառայողին և այլն / Resident Manager, Occupancy Clerk, etc.) հանդիպում նշանակելու համար:

**(ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.** Բոլոր ծրագրերի վարձակալների համար, բացառությամբ PRAC ծրագրերի, ավելացրե՛ք հետևյալ նախադասությունը: / **NOTE:** For tenants of all projects, except PRAC projects, add the following sentence.) Եթե դուք չեք պատասխանում մինչև (սույն ծանուցման ամսաթվից 10 օրացուցային օր հետո / 10 calendar days from the date of this notice), ապա ձեր վարձակալության պայմանագրի պարբերություն [17-ը\*\*կամ \*\*24-ը / 17 or 24] մեզ իրավունք է տալիս դադարեցնելու ձեր օգնությունը և գանձելու ձեզանից (շուկայական վարձավճարը/պայմանագրային վարձավճարը/110%-ը կամ BMIR վարձավճարը / market rent/contract rent/110% of BMIR rent), որն ուժի մեջ է (նշե՛ք սույն ծանուցման ամսաթվից 10 օրացուցային օրվան հաջորդող ամսվա առաջին օրը / insert the date that is the first day of the month following 10 calendar days from the date of this notice):

**(ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.** PRAC ծրագրերի վարձակալների համար ավելացրե՛ք հետևյալ նախադասությունը / **NOTE:** For tenants in PRAC projects add the following sentence): Եթե դուք չեք պատասխանում մինչև (նշե՛ք սույն ծանուցման ամսաթվից 10 օրացուցային օր հետո / insert 10 calendar days from the date of this notice), ապա ձեր վարձակալությունը կարող է դադարեցվել:

Անկեղծորեն,

(Կառավարող գործակալ, ռեզիդենտ մենեջեր և այլն / Managing Agent, Resident Manager, etc.)